ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

«ԿԱԽՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՈՒԺՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

«02» հոկտեմբերի 2025թ.

ՀՀ, ք. Երևան, Աճառյան 2-րդ նրբ. 2-րդ շենք
Հեռ. (+37412) 27-27-27

«ՓՐԻԹԻ ՈՒԵՅ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ

ՏԻԿԻՆ Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

ԾԱՆՈՒՑՈՒՄ

ԿԲԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/28-1 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ԼՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարգելի՛ տիկին Գրիգորյան,

2025թ.-ի սեպտեմբերի 26-ին «ԿԲԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/28» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչվել նվազագույն գնային առաջարկ ներկայացրած «ՓՐԻԹԻ ՈՒԵՅ» ՍՊԸ-ն: Ըստ կնքված «ԿԲԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/28-1» ծածկագրով պայմանագրի առաջին մատակարարումը պետք է իրականացվեր պատվերի հիման վրա, որը տրվել է 26.09.2025թ. էլեկտրոնային փոստի պատվերի հայտ ուղարկելու միջոցով: Սակայն, սույն թվականի սեպտեմբերի 26-ին մատակարարի կողմից ներկայացված գրության հիման վրա՝ նա հրաժարվել է իրականացնել մատակարարումը խախտելով կնքված «ԿԲԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/28-1» ծածկագրով պայմանագրի 2.4.1 կետ, որով պարտավորվում է Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով: Պատվիրատուի «ԿԲԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/28-5» ծածկագրով պայմանագրի 2.1.1 և 2.1.7 կետի (բ) ենթակետի համաձայն՝ կնքված պայմանագիրը համարվում է միակողմանի

լրիվ լուծված, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը: Պայմանագրի էական խախտում է համարվում եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Պատվիրատուի համար ընդունելի ժամկետում:

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք **2 բանկային օրվա** ընթացքում «Այ Դի բանկ» ՓԲԸ-ի **11813017106900 հաշվեհամարին** փոխանցել որակավորման ապահովման՝ **72 000 ՀՀ դրամի** և պայմանագրի ապահովման **48 000 ՀՀ դրամի չափով գումարները**, ընդամենը՝ **120 000 ՀՀ դրամ** և վճարման կտրոնները ներկայացնել ՀՀ ԱՆ «Կախվածությունների բուժման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի գնումների համակարգողին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՏՆՕՐԵՆԻ Ժ/Պ Գ. ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ